


# ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ



Г. А. ЭЗОВЪ. СНОШЕНІЯ ПЕТРА ВЕЛИКАГО СЪ АРМЯНСКИМЪ НАРОДОМЪ. XVI+CXLV+518,4<sup>0</sup> СПБ. 1893 г. ц. 5 р.

Պ. Եզեանի գիրքը շատ չարմար ժամանակին է լոյս տեսնում: Այժմ, երբ ուս հրատարակախօսներին մի ազդեցիկ խումբ, խօսքը մէկ արած, աշխատում է ստուեր ձգել հայոց ազգի բնաւորութեան վրայ և ընթերցող հասարակութեանը հայ տարրը ներկայացնել անհատարիմ, հակապետական ձրգտումներով համակուած, մի անաչառ, վսուերաթղթերի վրայ հիմնուած ակնարկ ձգել ուս-հայկական չարաբերութիւնների վրայ աւելի քան օրուայ պահանջ է: Արդէն երկու դար լրացած է այն օրից, երբ հայերի և Մոսկուայի թագաւորների մէջ սկսուեցին քաղաքական կապեր հաստատուել, և այս ժամանակամիջոցում հայ ազգութեան վերաբերմունքը դէպի ուսական տիրապետութիւնը կարողացել է ամեն կողմից բնորոշուել: Ներկայ գրքում հրատարակուած վաւերաթղթերը հնարաւորութիւն են տալիս այս չարաբե

րութեանց պատմութեան ամենահետաքրքրական և ամենակարևոր շրջանը լիովին լուսաբանելու: Պ. Եզեանի աշխատութեան գոկումենտական մասը վերաբերում է Պետրոս Մեծի և նրա անմիջական չարորդների ժամանակին, մինչև Պետրոսի նուաճած շուրջկասպեան նահանգների վերադարձնելը Պարսկաստանին, 1698—1736 թ.: Այս հանձարեզ կայսեր հայոց խնդրին տղած ուղղութիւնը մինչև վերջին ժամանակներս պահպանուած է ուսաց քաղաքակսութեան մէջ և հայութեան զգացմունքները դէպի ուսաց կայսրները շարունակում են մնալ նույնը, ինչ որ էին երկու հարիւր տարի մեզանից առաջ:

Գրքում հրատարակուած վաւերաթղթերը (ի ուով 305 հատ) հանուած են Արտաքին մինիստրութեան Մոսկուայի գլխաւոր և Պետերբուրգի արխիւներից, նաև Աւստրիական պալատական

և սկստական արխիւից, Բաւարիա-  
 չի գաղտնի — սկստական արխիւից  
 և այլ հիմնարկութիւններից: Իր-  
 բն լաւելուած գրքին կցուած են  
 1) մի հատուած „Relation des  
 grandes guerres et victoires ob-  
 tenues par le roi de Perse Cha  
 Abbas contre les empereurs de  
 Turquie Mahomet et Achmet etc.  
 par le P. Fr. Anthoine de Gou-  
 vea“ 1646 թ. լոյս տեսած հա-  
 զուագիւտ գրքից, որտեղ Գովէան  
 հետաքրքրական տեղեկութիւննե-  
 րով լրացնում է Առաքել Գաւրի-  
 ժեցու պատմութիւնը Շահ-Աբասի  
 արշաւանքի մասին, և 2) Սէն Մար-  
 տէնի կազմած նախագիծը Հա-  
 չաստանի հնութիւնների սխտե-  
 մական ուսումնասիրութեան հա-  
 մար. այս նախագիծը Ալէքսանդր  
 Փոն Հումբոլտի միջոցով 1831 թ.  
 ուղարկուած էր կոստ. Նիսեպոզին  
 և առաջին անգամ է այժմ տպա-  
 գրուած: Վաւերաթղթերի մեծ մա-  
 սը ռուսերէն է, միւս մասը ֆրան-  
 սերէն, լատալերէն, լատիներէն,  
 պարսկերէն և հայերէն: Մեր բար-  
 բառագիտութեան համար շատ  
 թանկագին նիւթ են պարունա-  
 կում հայերէն հրատարակուած նա-  
 մակներն ու չաչտարարութիւննե-  
 րը, որոնց լեզուն, նոյն լակ իբր  
 թէ գրաբառ գրուածներինը, ան-  
 ցեալ դարի Ղարաբաղի բարբառի  
 բառերով և դարձուածքներով լի  
 է: Վաւերաթղթերի դասաւորու-  
 թիւնը ժամանակագրական կար-  
 գով է, որով պահպանում է դէպ  
 քերի փոխադարձ կապը և չաջոր-  
 դութիւնը: Ուղղագրութիւնն և կէ-

տադրութիւնը կատարուած են ա-  
 մենայն խնամքով և համեմատ  
 գիտութիւն ներկայ պահանջների:  
 Ռուս-հայկական չարաբերութիւն-  
 ների մասին ունինք վաւերաթղ-  
 թերի մի այլ ժողովածու — АКТЫ,  
 собранные Кавказскою архе-  
 ографическою Коммиссіею, բայց  
 այս հրատարակութիւնը սկսում է  
 Եկատերինա Մեծից, սկզբնական  
 շրջանը բաց է թողուած: Այժմ պ.  
 Եղեանի հրատարակութեամբ լրա-  
 նում է այս պակասը: Մեր ա-  
 ռաջ դրած վաւերաթղթերը նոր լոյս  
 են տաում 18-րդ դարի սկզբի  
 բաղմաթիւ իրողութիւնների վրայ  
 և մանրամասնօրէն նկարագրում  
 են այնպիսի անձնաւորութիւննե-  
 րի դործունէութիւնը, որոնց գրե-  
 թէ միմիայն անուններն էլին մին-  
 չև օրս չայտնի:

Գիրքը ունի մի ընդհանուր  
 առաջաբան, որտեղ պ. Եղեանը  
 փորձում է տալ, իւր հրատարակած  
 վաւերաթղթերի և ուրիշ աղբիւր-  
 նիւրի հիման վրայ, ռուս-հայկա-  
 կան չարաբերութիւնների պատ-  
 մութիւնը 18-դ և 19 դ դարերում:  
 Հեղինակը մի առ մի ցոյց է տա-  
 լիս, թէ ինչպէս անձնուիրաբար  
 հայերը այս երկու դարերի ըն-  
 թացքում անշեղ աջակցել են ռու-  
 սաց տիրապետութեան տարածուե-  
 լուն Վովկասեան լեռներից այս  
 կողմը ի վնաս Պարսկաստանի ու  
 Տաճկաստանի և թէ ինչպէս պաշտ-  
 պան են կանգնել այդ տիրապե-  
 տութեանը ամեն անգամ, երբ  
 նուաճուած երկրի սրէ մասում

փորձ է արուել դրա՝ տակից դուրս գալու: Բերուած փաստերից շատերը, մանաւանդ 19-րդ դարին վերաբերեալները, բաւականին յարդէն չայտնի են հայ հասարակութեանը, օրինակ, հէնց Նրիցեանի և Պօտտոյի գրուածքներից. դրա փոխարէն գրեթէ բոլորովին նորութիւն են այն դէպքերը, որ կատարուել են 18-րդ դարի սկզբներում: Յիշատակենք այստեղ այս դէպքերից գլխաւորները, մանաւանդ որ դրանց մէջ գործիչ են հանդիսանում Ղարաբաղի մելիքները, որոնց երկիրների ներկայ դրութեան ուսումնասիրութեամբ քանիցս զբաղուել է «Ազգագրական Հանդէսը»:

7-րդ դարից օտարազգի հրոսակները իրար ետևից սկսեցին հեղեղել Հայաստանի սահմանները: Բայց արաբական արշաւանքը այն բնաւորութիւնը չունեցաւ, ինչ որ լաջորդ թիւրքականը: Ուղիղ է, երկիրը ընկաւ արաբական լծի տակ և սկսեց կառավարուել ոչ բնիկ կառավարիչների, ոստիկանների ձեռքով, բայց այնուամենայնիւ հողերի ահագին մեծամասնութիւնը մնաց տեղացիների, հայերի ձեռքում, նոյն իսկ հայ ազնուապետութիւնը շարունակում էր ամեն տեղ սլահպանել իւր կալուածատիրական իրաւունքները: Արաբական հողատէրերի գիւղերն և դաշտերը փոքրաթիւ ուլազիսներ էին կազմում ընդհանրապէս հայաբնակ երկրի մէջ, և ահա արշաւանքի սկզբնաւորութիւնից երկու դար անցած, երբ

անհետացաւ առաջին աւարածութիւնների սարսափը և նուաճողներն ու նուաճուածները աւելի մօտիկ ծանօթացան իրար հետ, զարթեց տեղական տարրի ինքնավարական ձգտումը, որի հետեանքն եղաւ Բաղրատունեաց, Արծրունեաց և ուրիշ թագաւորութեանց ծագումը Հայաստանի զանազան կողմերում:

Բայց այլ բնաւորութիւն ունէին թիւրքական արշաւանքները: Տուղրիլ բէկի և Ալփասլանի հրոսակները գրաւեցին հայոց լաւագոյն դաշտավայրերը, բնիկ ժողովուրդը կամ քաշուեց լեռները, ձորեր կամ հեռացաւ՝ նոր հողեր և նոր բախտ որոնելու օտարութեան մէջ, գլխաւորապէս Փոքր Ասիա: Գաղթողների մէջ առաջից տեղն էին բռնում կալուածատէր ազնուապետները, թագաւորներն ու նախարարները: Այսպիսով երկրի ազգաբնակչութեան կազմութիւնը արմատական փոփոխութիւն կրեց: Միայն Հայաստանի՝ Կուր գետին նայող լեռների ձորագաշտերի մէջ հայկական տարրը դեռ մնում էր իւր անխառն վիճակի մէջ, նաև Սիւնիքում ու մասամբ Սասնոյ լեռներում, մնացած տեղերում կալուածատէր իշխանները մահմետական սելջուկներն էին: Կուր գետի հովտում վրաց թագաւորները, հարեան հայ իշխանների ձեռնուութեամբ, սկսեցին ազատ զարգանալ և ընդարձակել իրանց սահմանները դէպի հարաւ, Արա-

րատեան դաշտում: Մի բոպէ թը-  
ւում էր թէ իրերի բնական ըն-  
թացքը նպատակ ունի ստեղծել  
հիւսիսում մի հզօր քրիստոնեայ  
պետութիւն, որն այնուհետեւ, լե-  
նուելով հաւատակից հայերի հա-  
մակրութեան և աջակցութեան  
վրայ, ամբողջ Հայաստանը խլելու  
է թիւրքական իշխանների ձեռ-  
քից: Սակայն այս ընթացքը խան-  
գարուեց նոր աղէտով, թաթարա-  
կան արշաւանքով:

Այս անգամ օտարականները  
մտան այն կողմից, որ ազատ էր  
մնացել նախորդ ազգերի սրա-  
ծութիւններից, արևելքից, Մու-  
ղանի դաշտից: Աղուանից հարուստ  
երկիրը ոտնատակ եղաւ և ազգա-  
բնակութիւնը բնաջինջ. հողերը  
անցան թաթարների ձեռքը: Այ-  
նուհետեւ իրար և տեղից նուաճուելին  
Վուրի հովտի հայկական իշխանու-  
թիւնները, Վրաստանը անկարող ե-  
ղաւ զգալի ընդդիմադրութիւն ցօյց  
սալ կիսավայրենի ամբոխի առա-  
ջընթացութեան, թաթարները հտ-  
սան մինչև Ռկոնիայի և Վիլիիիայի  
սահմանները և երևացին նոյն  
խակ Միջագետքում: Ամբողջ պատ-  
մական Հայաստանը լցուեց թա-  
թարներով: Նոր գաղթականու-  
թիւնները աւելի դատարկեցին եր-  
կիրը, ընդարձակ արտերը դար-  
ձան արօտատեղիներ խաշնարած  
նուաճողների համար, հողերը բա-  
ժանուեցին հրոսակների առաջ-  
նորդների մէջ, որոնց հպատակուե-  
ցին հայոց զիւղերն ու քաղաքնե-  
րը: Այսպիսով մի ամբողջ դատա-

կարգ, նախարարականը, որն Հա-  
յաստանի քաղաքական անցեալում  
գերակշիռ դեր էր կատարել և  
եղել էր ժողովրդի ինքնավարա-  
կան ձգտումների կրկն պարսկա-  
կան, արաբական, նոյն իսկ սել-  
ջուկեան շրջաններում, գրեթէ  
ամբողջովին ոչնչացաւ: Միայն  
Ղարաբաղում դեռ ևս պահպանե-  
ցին հայ աղնուապետները ոչ մի-  
այն կալուածատիրական, այլ և  
իշխանական իրաւունքներով. հայ-  
կական նախարար և սեպուհ ա-  
նունները փոխուեցին մելիքի և  
բէկի: Ամբողջ չորս դար շարու-  
նակ կռիւ մղելով թէ շրջակայ  
փոքր թուրք-թաթարական առաջ-  
նորդների և թէ Վանկթամուրի  
պէս աշխարհակալների դէմ, նըր-  
անք կարողացան իրենց անկա-  
խութիւնը պահպանել մինչև 17-  
դարի վերջերը և այնուհետեւ  
էլ այլևս մէկ հարիւրամեակից ա-  
ւելի, մինչև ռուսների մտնելը  
Ղարաբաղ:

17-րդ դարի վերջերում Շահ-  
Աբասի կազմած հզօր տէրու-  
թիւնը արագ մօտենումէր իր անկ-  
մանը: Սէֆեան տան վերջին ներ-  
կայացուցիչները աւելի զբաղուած  
էին հարեմով և գինով, քան պե-  
տական գործերով: Սէֆի II Սու-  
լէյմանը (1666--1694), որ մի հի-  
ւանդոտ մարդ էր և գրեթէ ամեն  
օր մահուան պատիժներ էր ար-  
ձակում և լանցաւորների ու անմեղ-  
ների քիթը, ականջներն կամ լե-  
զուն կտրել էր տալիս անխտիր  
կերպով, արդէն չէր կարողանում

պահպանել իւր երկրի սահմանները հարեանները չարձակումներինց. ամեն բոպէ սպասուում է օսմանցիներին կրկին արշաւանքը Արարատեան աշխարհը, որ 1639 թ. ի վեր գտնուում է Պարսից ձեռքում: Մայրաքաղաքում ու գաւառներում թագաւորում էր հաճոյքն ու բռնակալութիւնը, մահմետական հոգևորականութիւնը աւելի և աւելի մեծ ազդեցութիւն էր ձեռք բերում. վերջին Սէֆեանը, Սուլթան Հուսէյնը (1694 — 1722 թ.) այլասեռման ամեն նըշաններն էր ցոյց տալիս. նրա մասին ռուսաց դեսպանը Ա. Վ. Սլինսկին գրում էր Պարսկաստանինց. «Այժմ այստեղ այնպիսի մի գլուխ է, որը ոչ թէ ինքը տէր է հպատակներին վրայ, այլ հպատակների հպատակն է, և կարծում եմ սակաւ կարելի է այսպիսի մի ծալպակաս (цвалкаса) գտնել նոյն իսկ հասարակ մահկանացուների, ոչ թէ պսակակիրների մէջ:» Շիաների մոլեռանդութիւնը բռնի և օրէնսդրական ճանապարհներով աշխատում էր մահմետականութիւնը տարածել քրիստոնեայ հրպատակներին մէջ: Միւս կողմից՝ կաթողիկոս քարոզիչները, իրանց երկիրների թագաւորների հովանաւորութեան վրայ լինուելով, բուն էին դրել Շամախիում, Նախիջևանում, մինչև անգամ Երևանում, Էջմիածնի աշքի սուաջ և ձգտուս էին թէ հասարակ ժողովուրդի և թէ նոյն իսկ կաթողիկոսների մէջ այն համոզմունքը հաստատել, որ

պապը կարող է ստիպել եւրոպական պետերին միջամտել հայերի ազատութեան գործում, և որ այդ աջակցութիւնը կարելի է Հռոմից սպասել միայն այն ժամանակ, եթէ հայերը ճանաչեն պապի դերիշխանութիւնը: Այդ միջոցին, Շահ Աբասի թագաւորութիւնինց սկսած, արդէն մի քանի պատգամաւորութիւններ էին անցել Պարսկաստան արարական թագաւորներինց, հալ վաճառականները արդէն կապեր էին հաստատել Ռուսաստանի և արևմտեան պետութիւններին հետ, որտեղ սկսուել էին լսել ձայներ քրիստոնեաներին մահմետական լծից ազատելու մասին: Եւ անա 1578 թ. էջմիածնում հաւաքուում է Յակոբ Վ կաթողիկոսի նախագահութեամբ մի գաղտնի ժողով վեց հոգևոր և վեց աշխարհական անդամներից և վճռում է ուղարկել պապի և երոպական թագաւորներին մօտ մի պատգամաւորութիւն հայերին պարսից լծից ազատել խնդրելու: Պատգամաւորութեան գլուխ պիտի լինէր ինքը կաթողիկոսը, իսկ անդամները Երեք հոգևորական և երեք աշխարհական: Աշխարհականների թւում ընտրուած էր իշխան Իսրայել Պրոօշեանը, որը սակայն վախենալով Պարսից կասկածը զրգուել, իւր փոխարէն ուղարկեց իւր որդի Օսիին: Այս պատգամաւորութիւնը եկաւ Կ. Պօլիս որտեղ Յակոբ կաթողիկոսը վախճանուեց, մնացած պատգամաւորները առանց առաջնորդի մնալով վերադարձան հալ-

րենիք, միայն Օսին միացաւ հայ վաճառականներու հետ և անցաւ Վենետիկ և այնուհետև Ֆրանսիա, ուր մտաւ զինուորական ծառայութեան մէջ: Օսին մասնակցեց Լիւդովիկ XIV պատերազմներին Գերմանիայի և ամբողջ եւրոպական զինակցութեան դէմ, Նահուրի մէջ պաշարուեց Ֆրանսիացիներու հետ անդլիացիներէից և գերի ընկաւ, բայց անգլիական թագաւորը ազատութիւն տուեց նրան: Այսպիսով 12 տարի մնալով Ֆրանսիայում և լաւ սովորելով ֆրանսերէն, նա անցաւ Գերմանիա, Պֆալց: Այստեղից նա սկսում է իւր մտադրութեան գործադրութիւնը:

Իսրայէլ Օսին (ծնուել է մօտաւորապէս 1659 թ.) ծագում էր Խաչէնի Պոօշեան իշխանական տնից, որը XII-րդ դարից սկսած աչքի է ընկել իւր բարեպաշտական ոգով և ատելութեամբ դէպի մահմեդականները: Հէնց միայն XVII դարի վերջին տասնամեակներում այս տունը չորս նահատակ տուեց քրիստոնէական հաւատի համար, որոնց թւումն էր և Օսիի հայրը: Անկասկած այս պարագաները առանց ազդեցութեան չմնացին Օսիի վրայ, որը իւր կեանքի գլխաւոր նպատակը դրեց հայրենիքի ազատութիւնը: Այս գործի համար նա լանձն առաւ աստանդական կեանք, բաղձաթիւ զըրկանքներ և զոհողութիւններ: Եւրոպայում նա մի ժամանակ պարապեց վաճառականական ձեռնարկութեամբ, բայց շուտով թո-

ղեց և անցաւ զինուորական ծառայութեանը: Ֆրանսիայից անցնելով Գերմանիա Հռենոսեան Պալատինի և Պֆալցի կուրֆիրստի (կայսրընտիրի) ծառայութեան մէջ մտաւ: Կուրֆիրստ էր Յովհաննէս Վիլհելմը, հռենոսեան Պալատինատի իշխանը, որը ազդակցական կապերով կապուած էր Գերմանիայի կայսեր, Իսպանիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի, Լեհաստանի թագաւորների և միքանի ալ երկրորդական պետերի հետ. կուրֆիրստի այս կապերը շատ նպաստաւոր կարող էին լինել Օսիի մտադրութեան համար: Օսին չորս տարի ծառայեց իբրև կոմիսար Պալատինատի չորս քաղաքներում և առիթ ունեցաւ մօտենալու իշխանին և իւր ծրագիրը նրան չափոնելու: Այս դէպքում նրան շատ օգնեց կուրֆիրստի խոստովանահայրը, որին Օսին յոյս տուեց որ հայերը կարող են մահմեդական լծից ազատուելուց լետուց, ճանաչել Հռոմի պապի իշխանութիւնը: Պալատինի սիրտը շարժուեց Օսիի նկարագրութիւններից և նա համաձայնուեց նախաձեռնող հանդիսանալ հայերին պարսից լծից ազատելու գործում: Եւրոպական հեղինակներից մէկը ասում է, իբր թէ կուրֆիրստին զրդում էր ոչ թէ կարեկցութիւնն ու կրօնական դժգոհութիւնը, այլ Հայաստանի թագով պսակուելու ցանկութիւնը, բայց վաւերաթղթերից ոչ մէկի մէջ չկայ նույն իսկ մի հեռաւոր ակնարկ նրա

աչապիսի դիտաւորութեան մասին: 1698 թ. Օսին ստացաւ Յովհաննէս Վիլհելմից նամակներ Էջմիածնի և Քանձասարի կաթողիկոսների, մե- լիքների և Վրաստանի կառավար- րիչ Վիորգիի անունով: Այս գրու- թիւնների մէջ կուրֆիւրստը յույս էր տալիս հայերին մահմեդական- ներից ազատելու և լանձնարա- րում էր լիովին հաւատալ Օսին: 1699 թ. ապրիլին Օսին հասաւ Էջմիածին, ուր սակայն երկար չը մնաց և իւր զաղտնիքը չը չաչո- նեց, որովհետև կաթողիկոսական գաճը թափաւ էր և վանքի մէջ խռովութիւններ էին ծաղկել Նզիրա- զար հայրապետի մահից լետու, այլ շտապեց անցնել Քանձասար: Այստեղ կաթողիկոսի նախագահ հութեամբ տեղի ունեցաւ հինգ արքեպիսկոպոսների ժողովը, ուր Օսին ծածկելով իւր ճանապարհորդութեան խեղճան նպատակը, չաչոնեց, որ կուրֆիւրստը կամե- նում է օգնել հալածուած քրիս- տոնեաներին, և նուիրաբերու- թիւններ անել լոգուտ և կեղեցի- ների, վանքերի, հիւանդանոցնե- րի և այլ աչապիսի հիմնարկու- թիւնների և որ այս նուիրաբերու- թիւնների կանոնաւոր գործա- դրութեան վրայ հսկելու համար կուղարկէ իւր ինժինեւրներին, կոմտարներին ու հոգևորական- ներին. Օսին ակնարկեց նոյնպէս, որ լաւ կը լինէր եթէ հայերը հե- տեէին Վրիգոր Առսաւորչի օրի- նակին, որը իւր իշխանութիւնը ստացաւ Հռոմի պապից: Աթո-

ղիկոսի պատրաստականութիւնը չաչոնեց ընդունելու իշխանի նուիրաբերութիւնները, միայն թէ այդ օժանդակութիւնը լինի զաղտնի և գործադրութիւնը լիովին իրան լանձնուի, որովհետև կողմնակի ան- ձանց մասնակցութիւնը կարող է գրգռել պարսիկների կասկածը: Իսկ պապի իշխանութիւնը ընդու- նելու մասին ժողովականները խիստ հակառակ խօսեցին: Քան- ձասարից Օսին անցաւ Անգեղա- կոթ, որտեղ հաւաքուել էին, բա- ցի այդ կողմերի մելիք Սաֆրա- զից (Մելքոնի որդի), ուրիշ ինք իշխաններ: Լսելով Օսիի բացա- տրութիւնները, մելիքները պա- տասխանեցին կուրֆիւրստին նա- մակով, որ և մէջ՝ ճանաչելով Օսի Պաօշեանին իրանց ներկայացու- ցիչ բանակցութիւնների համար, աւելացնում էին, որ Աստուծու ո- ղորմութեամբ ունին և փող, և կարողութիւն, և զէնք կրելու ըն- դունակ մարդիկ—չունին միայն երկրի կառավարիչ և աղաչում են Աստուծուն, որ այդ կառավարիչը լինի ինքը կուրֆիւրստը, եթէ ոտ- րին պայծառութիւնը կուղարկէ օգնական զօրքերով իւր եղբայր Աարլոսին՝ իրանք գրկաբաց կըն- դունեն նրան և ամեն ինչ կը պատրաստեն մինչև իրան իշխանի ժամանելը, և ոչ իրանց կարողու- թիւնը, ոչ արիւնը, ոչ էլ կեանքը չեն խնայիլ ոտրին պայծառութեան ծառայելու համար: Աուրֆիւրստի նամակի մէջ նրանք զգալ էին տալիս որ կարող են ապագայում

միանալ հռոմէական եկեղեցու հետ. դրեցին և մի նամակ պապին, բայց այս խոստումները նրանք անուժ էին պարզապէս մի նպատակով, որ առաջ բերեն եւրոպական պետութիւնների միջամտութիւնը պարսկական գործերի մէջ: Միաժամանակ նրանք Օսկին հաւասար լիազօր ընտրեցին Ղարաբաղի Ս. Յակոբի վանքի Մինաս վարդապետ Տիգրանեանցին և դրեցին մի ուրիշ նամակ նոյնպէս և ռուսաց Պետրոս թագաւորին: Այս նամակի մէջ նրանք հալոց եկեղեցու մասին չէին խօսում իբրև աղանդի մասին, նոյն իսկ չէին առաջարկում իրանց երկիրը Յովհաննէս-Վիլհելմին տալ, այլ մէջ բերելով 1678 թ. Էջմիածնի ժողովի պատմութիւնը, գրում էին, «հիմի 19 ամ է որ պ. Իսրայել Օսկին կու աշխատի մեզ համար. մենքլ զինքն ի վերայ մեր գլխաւոր արժանիս տեսաք և տուինք զմեր խօսքս ուղիղ սրտիւ. ինչ որ կու հաստատէ հետ թագաւորաց մեզ խապուլ է... Պ. Իսրայելն և Մինաս վարդապետն ինչ որ կու հաստատեն առ քո ինքնակալ թագաւորիդ հետ, հաճելի է մեզ ամենեցունս: Մենք հաւատալիք ունինք այդ քո օրինեալ տանդ և քո օժեալ անթառելի ինքնակալ ի վերուստէն շնորհեալ թագաւորութիւնդ լինի որ լսես մես սակաւ Ասկիս (?) և արիանաս... Մենք տարակուսեալ եմք կու դողանք, Քրիստոսի ողորմութեամբն ար. մեզ ճար... Խընդ

րեմք ի քո ինքնակալէդ որ ձեռքես սէր այս բանիս վերայ և լինիս պարծանք աղգիս մերոյ, որ մենք վաղեմէ ունէաք ումուտ մեր սուրբ գրոցն և նախնեացն, որ քեզանով պիտի լինի մեզ իմտատ աշխարհի... Մեր խորհուրդըն այն է, որ մենք մեր իշխանքով պարօնօքս ամենեքեանս հնազանդ լինինք քո մեծ թագաւորութեանդ որպէս հնազանդ են բազում իշխանք քո հրամանին ներքև. լինինք մենքլ նմանապէս մին ծառայ քո մեծ տէրութեանդ. որ ժամանակաւ ինչ որ կու հրամայիս բարուն բարի և չարուն չար, կենամք հաստատ ի վերայ ուխտիս, գլխով և ապրանքով, որդովք և տստերովք, կենամք հնազանդ առ քո հրամանատութեանը»

Օսկին, ստանալով այս գրութիւնները, շտապեց վերադառնալ Եւրոպա կրկին Վ. Պօլսով: Ժամանելով կուրֆիրստի մօտ, նա ներկայացրեց արշաւանքի մանրամասն ծրագիր \*): Յոյց տալով, թէ ինչ մասնակցութիւն կարող են ունենալ գործի մէջ, ի միջի այլոց Աւստրիայի կայսրը, Լեհաստանի և Ռուսաստանի թագաւորները:

\*) Ուրիշ չալտարարութեան մէջ Օսկին հաշիւ էր տալիս իւր ճանապարհորդութեան զանազան հանգամանքների մասին, ի միջի այլոց սրտաշարժ կերպով նկարագրում է իւր տեսակցութիւնը քրոջ և եղբայրների հետ, որոնց սակայն չչալտնեց իւր ուղ լինելը:

Մտադրութիւն կար զօրք հաւաքել և Ռուսաստանով—Հաշտարխանով ու Կասպից ծովով տեղափոխել Բագու, գրաւել Շամախին, Գանջան, Լօռին, Կապանը և Նախիջևանը, ամեն տեղ ոտքի կանգնեցնելով հայերին և վրացիներին: Կուրֆիրստը յանձնեց Օռլին մելիքները Նանսէի պատասխանը և մի նամակ Աւստրիայի կայսեր անունով, որին առաջարկում էր մասնակցել այս ձեռնարկութեան մէջ: Կայսրը լաւ ընդունելութիւն ցուց տուեց Օռլին և իւր կողմից ևս խոստացաւ աջակցել գործին, միայն բացատրեց, որ առանց ռուսաց թագաւորի օգնութեան այս ձեռնարկութիւնը չէ կարող ոչ սկսուել, ոչ էլ չաջող ելք ունենալ: Ուստի Օռլին յանձնարարական նամակներ վերցրեց կուրֆիրստից ու կայսրից և դիմեց Մոսկուա (1701 թ.): Կուրֆիրստը խնդրում էր Պէօտր Ալէքսէվիչին լսել Օռլին, քննել նրա առաջարկութիւնը և եթէ այդ առաջարկութիւնը իրագործելի կը գտնէ՝ և կը հաւանէ և եթէ համաձայն է թուի տալ իւր պատրաստած կամ հաւաքած օգնական զօրքերին անցնել ռուսաց սահմաններով, այն ժամանակ ինքը՝ կուրֆիրստն էլ կը կատարէ մելիքների ու Օռլի խնդիրքը:

Մոսկուայում, առաջ քան անձամբ թագաւորին ներկայանալու, Օռլին ստիպուած էր մի քանի անգամ բացատրութիւններ տալ արտաքին գործերի առեւ-

նին իւր գործի մասին, օրինակ, թէ որքան զօրք է ուղարկելու կուրֆիրստը, ինչ ճանապարհով և ինչ պատրուակով նրանք անցնելու են սահմանը. ճանապարհին արդեօք ոչ մի մնաս չեն պատճառիլ ռուսաց հպատակներին, գրաւած երկիրները ում սեփականութիւնը պիտի դառնան և այլն: Այս հարցերին նա մի առ մի պատասխաններ էր տալիս, որոնք սակայն բացատրութիւն չէին տալիս ռուսաց կառավարութեանը: Օռլի ծրագիրը սկսեց փոքր առ փոքր փոփոխուել. նա 1701 թ. յուլիսի 22 գրում է արտաքին գործերի առեւտրին. «Կուրֆիրստի գոնդերի մասին պատասխանում եմ, որ մեզ հարկաւոր չեն: Առաջին տարին մեզ ուրիշ զօրք հարկաւոր չէ, բացի Յարի զօրքից: Եւ չենք էլ խնդրել Պալատինից զօրք, այլ խնդրել եմ հարկաւոր աջակցութիւն յամենայն դէպս, որպէս զի եթէ թիւրքաց կայսրը մեր դէմ պատերազմ սկսէ, մենք կարողանանք այն կողմից՝ ցամաքով և ծովով օգնութիւն ունենալ: Կուրֆիրստը կամենում է մաս ունենալ այս փառքից և պատրաստ է ոչ միայն զօրք, այլ և ուրիշ հարկաւոր բաներ տալ: Եթէ Յարը ուզենայ, որ կայսեր և Պալատինի կողմից օգնական զօրքեր դան, այս զօրքերը նրանց հաշուով կը կերակրուեն, վճարելով ամեն բանի, մինչև անգամ մի հատ ձուի համար. բոլոր գրաւած ամրոցներն ու երկիրները կը մը-

նան Յարի ձեռքի տակ, ուսաց զօրքերը կը կերակրուեն հայերի պաշարով. բայց ամենազլխաւորն է, որ Նորին թագաւորական Վեծութիւնը մեր խնդիրքը ընդունէ և բարեհաճէ լինել մեր երկրի տէր: Միքանի օրից լետոյ Օսին ներկայացրեց ուսաց կառավարութեանը մանրամասն ծրագիր մտադրուած արշաւանքի մասին. այս համարեա թէ նոյնն է, ինչ որ ներկայացրած էր կուրֆիրատին Հայաստանից վերադառնալուց լետոյ: Հարկաւոր են 15 հազար հեծեալ և 10 հազար հետեակ, գըլխաւորապէս Հաշտարխանի կազախներից և չերկեսներից, չայտնի քանակութեամբ թնդանօթներով, ումբաձիղներով և ալլն: Կրօշակի վրայ մի կողմից պիտի լինի Խաչելութիւն, միւս կողմից՝ ուսական արծուի նշանը: Նախ և առաջ պէտք է գրաւել Շամախին, լետոյ բաժանելով զօրքը չորս մասի, շտապել անշապաղ Վանձակի, Լօռու, Կասպանի և Նախիջեանի վրայ, ուր պիտի հաւաքուի հայոց ամբողջ զօրութիւնը, աջուհետե տիրանալ Երևանին ու Վրաստանին, որի իշխանը թէև ընդունել է մահմեդականութիւն, բայց զինուորները բոլորն էլ քրիստոնեայ են: Այստեղ Օսին ձեռնարկութեան իրական գործումը ուղղակի առաջարկում էր ուսաց թագաւորին, մանրամասն ցոյց էր տալիս, թէ որքան զինուոր կարող են տալ հայերն ու վրացիք (116 հազար հայեր, 30 հազար

վրացիք), և աւելացնում էր, որ ժամանակը շատ նպաստաւոր է, քանի որ պարսից բոլոր նահանգներում քրիստոնեաները ապստամբուել են և ոտքի են կանգնել պարսիկների դէմ: Վերջապէս 1701 թուի նոյեմբերի սկզբում Օսին Պետրոս թագաւորի հետ անձամբ տեսակցութիւն ունեցաւ: Ընդունելութեան միջոցին նա թանկագին ընծաներ ներկայացրեց, մեծ մասամբ տաճկական ձեռագործներ, և բերանացի չայտնեց նրան հայկական դատը: Երևի ոչ մի պարզորոշ սլատասխան նա այդ օրը չկարողացաւ ստանալ, որովհետև այնուհետև միքանի անգամ նա դիմեց արտաքին գործերի ատեանին, խնդրելով, որ իրան հաղորդեն որոշ կերպով, արդեօք այն «թագաւորական Վեծութիւնը բարեհաճում է այն գործին, որի համար ինքը լղարկուած է, կատարելապէս ձեռնամուխ լինել: Նրան սլատասխանեցին բերանացի, որ թագաւորը «ճակուած է» այդ գործին: Օսին կամենում էր այս սլատասխանը հաղորդել կուրֆիրատին, բայց սկսուել էր ուսուչվեղական պատերազմը և հայերի բանակցութիւնները շատ կամայ ըսկսեցին առաջ գնալ: Միայն 1702 թ. մարտի սկզբում նա հետեւեալ բացատրութիւնը ստացաւ արտաքին գործերի ատեանից. թագաւորը չէ հրաժարւում այն գործից, որ իրան առաջարկում է պատգամաւորութիւնը, և խոստանում է սկըսել և առաջ տանել այդ գործը:

հէնց որ կը վերջացնի շվեդական պատերազմը. թող այդ մասին իրանք գրաւոր կերպով չաչտնեն թէ իրանց ուղարկող պետերին և թէ մելիքներին, որոնց թող լուսադրեն ամենայն կերպով: Օսին և Մինաս վարդապետը այս պատասխանը ուղարկեցին կուրֆիրստին և կալսերը և այլազգի Նազար Արեխովիչի ձեռքով, որ ռուսաց ծառայութեան մէջ գտնուող մի սպայ էր, իսկ Ղարաբաղի մելիքներին նամակներ գրեցին և լանձնեցին հայ Միրօն Մուստաֆին և Վասիլեին: Այս երկու սուրհանդակներից առաջին վերադարձաւ նոյն տարուայ վերջում, իսկ Միրօնը միայն 1703 թ. Արեխովիչի միջոցով կուրֆիրստը գրում էր, որ սրտանց աղաչում է Աստուծուն, որ նա օրհնէ պատգամաւորների սուրբ մտադրութիւնները, և ամեն կերպ ինքն էլ կաջակցէ, միայն թէ այժմ պատերազմ ունի Ֆրանսիայի, Իսպանիայի և նրանց դաշնակիցների հետ և այս պատերազմի վերջանալուց լետու միայն ամեն ջանք գործ դնել հայերին օգնելու համար: Միրօնը բերեց նամակներ էջմիածնից և Գանձասարից և մելիքներից, որոնք ուրախութիւն էին չաչտնում թագաւորի տուած խոստումի առիթով և ի միջի այլոց գրում էին. «Այնպիսի լինի որ մեր կողմանէ մին կարծիք չի լինին այդ կողմն որ մեղ սուրն քաշեն, կու խնդրեմք ամենից կարող Աստուծոյ որ նա քո բարի թա-

գաւորութեանդ աջողումն երբոր քո շնորհալի արմն մեր աշխարհն մտանելն մեք այն վաղթին ամենինչ պիտանի ընչիւք պատրաստեմք քո էզիզ թագաւորութեանդ օղուրումն: Աստուած տալ այն օրն ամեն ինչ պակասութիւն չի լինիր էսքէրին: Այսուհետև մեք առանց տքնութեան օր արօրէ դէստուրի կու նայիմք զոր ինչ հրամայես, զայն կատարեմք»: Մելիքները ուղարկել էին նրան մի պարտամուրհակ արտաքին գործերի ատենապետ Գոլովինին, որով սրան խոստանում էին տալ քսան հազար ռսկի (որ չէին ուղարկել անհաւատների երկիւղից). «Ինչ ժամանակն որ այս խորհուրդը մեր կատարի Աստուծով անպատճառ և այլ աւելի ընծայ շնորհակալութեամբ շնորհել մեծ բարութեան փոխարէն»:

Շվեդական պատերազմի շնորհիւ հայկական դատը լետածըւում էր: Ուստի Օսին վճռեց դնալ Եւրոպա իւր ընտանիքի մօտ (կինը և երկու տղաները մնացել էին այնտեղ) և ստանալ կուրֆիրստից, կալսրից ու պապից լանձնարարական հրովարտակներ պարսից շահի անուենով, որ իւր թագաւորութեան մէջ քրիստոնեաներին չնեղէ, նոյնպիսի հրովարտակ ստանալ նաև Պետրոսից և ուղևորուել Պարսկաստան մասամբ քրիստոնեաների վիճակը թեթևացնելու, մասամբ էլ անձամբ ապստամբութեան պատրաստութիւնը տեսնելու: Նա խնդրեց Պետրոսից որ ի-

րան ռուսաց զօրքի պոլկովնիկ—  
 գնդապետ նշանակէ, որպէսզի ա-  
 ւելի հեշտ կարողանայ հրաւիրել  
 սպաներ, զանազան վարպետներ և  
 ձեռք բերել ամենը, ինչ որ հար-  
 կաւոր էր պատերազմի համար.  
 այս մարդիկ պէտք է իւր հետ  
 գնային Թաւրիզով Իսպահան և վե-  
 րադառնային հետը հայոց և վրաց  
 աշխարհներով: Օսին գնդապետու  
 թիւնը ստացաւ և 1704 թ. գնաց  
 Աւրոպա, տեսնուեց կուրֆիրստի  
 և կայսեր հետ, ձեռք բերեց նը-  
 րանցից հարկաւոր հրովարտակ-  
 ները, կուրֆիրստի խոստովանա-  
 հօր միջոցով ստացաւ պապի հրո-  
 վարտակը և վերադարձաւ 1706 թ.  
 վերջում Մոսկուա, որտեղ նույնպէս  
 նրան տուին թագաւորական հրո-  
 վարտակը: Հրամայուած էր տալ  
 նրան, իբրև թագաւորական դես-  
 պանին, ճանապարհածախս: 1707  
 թ. լունիսին Օսին ճանապարհ ըն-  
 կաւ դէպի Պարսկաստան. նրան  
 ուղեկցում էին մօտ 50 հոգի՝ զա-  
 նազան ազգութեանց և պարապ  
 մունքների մարդիկ, որոնց նա  
 մեծ մասամբ հաւաքել էր արտա-  
 սահմանում, որոնց համար նա  
 կարել էր տուել շքազգեստներ,  
 տուել էր զանազան պաշտօններ,  
 մի խօսքով ոչ մի ջանք չէր խնա-  
 յել դեսպանութեանը շուք ու փառ  
 տալու համար \*): Պետրոսը գրում  
 էր Նուսէլին շահին. «Ի՛արեհաճէք

\*) Այս մարդկանց մէջ էր  
 Յովհաննէս, Յովակիմ, Շրէօդէրը,  
 վերջը նշանաւոր հայագէտը:

մեր գնդապետ Իսրայէլ Օսին մեր  
 թագաւորական հրովարտակով թող  
 տալ պատշաճաւոր պատուով ձեր  
 գահին մօտենալ, ընդունել նրան,  
 սիրալիր կերպով լսել, ցոյց տալ  
 ամեն շնորհք և նրա արժանաւոր  
 խնդիրքին բաւարարութիւն տալ»:

Հաշտարխանով Օսին գնաց  
 Շամախի: Այսպիսի բազմամարդ  
 դեսպանութեան գալուստը մեծ  
 տպաւորութիւն արեց պարսից աշ-  
 խարհում: Եկել էր ռուսաց թա-  
 գաւորի դեսպանը, բերելով իւր  
 հետ պապի և կայսեր նամակները,  
 ինքը հայ է, Պարսկաստանում ծը-  
 նուած, հայոց հին թագաւորի սե-  
 րունդ, մտադիր է բարեխօսել քը-  
 րխտոնեաների վիճակի բարելաւ-  
 ման մասին, խնդրել որ միսիօ-  
 նարները արտաքսուին երկրից և  
 այլն. այս լուրը արագ տարա-  
 ծուեց ամեն կողմ: Մի ֆրանսիա-  
 ցի, որ ուղարկուած էր Լուդովիկ  
 XIV կողմից, սկսեց ասել շահին,  
 որ Օսին բերած հրովարտակները  
 կեղծ են. միւսները պնդում էին,  
 թէ հայերի մէջ աւանդութիւն կայ  
 որ իրանց թագաւորութիւնը պէտք  
 է վերականգնի ռուսաց օգնու-  
 թեամբ և որ այդ մարգարէութիւ-  
 նը ահա կատարոււմ է, որովհետև  
 Իսրայէլ Օսին անուան տառերից  
 կազմոււմ է il sera roi — «նա թա-  
 գաւոր կը լինի»: Իսպահանում կա-  
 լանաւորուած Միր-Վէյսը օգտուեց  
 այս հանգամանքներից իւր հայրե-  
 նի կանդահար երկիրը կառավա-  
 րող Գիւրջի-խանին տապալելու  
 համար: Այս շահին թելադրում էր,

որ անկասկած Պետրոսի պէս հզօր  
և փառասէր թագաւորը ղեսպա-  
նութիւն է ուղարկում, այն էլ  
նշանակել է ղեսպանութեան զլուխ  
հալին, որպէս զի խառվութիւն  
մտցնի Պարսկաստանի սրտում,  
անկասկած հալւին ու վրայիները  
կօզնեն իրենց հաւատակից ռուս-  
ներին և Վիւրջի-խանը, չնայելով  
որ մահմեդական է, ի հարկէ կը  
միանայ իր նախահայրերի հպատա-  
կների հետ: Միւր Աէլսը կարողա-  
ցաւ այսպիսի խօսքերով Վիւրջի-  
խանին կասկածելի դարձնել և նրա  
տեղը նստել Աանդահարում, բայց Ս-  
ուիին ընդունել չտալ շաջողեց. շահը  
վախեցաւ Պետրոսից: Ասիին պատ-  
շաճաւոր պատիւներ էին ցոյց տու-  
ած խաղահանում: 1709 թ. իւր  
պատասխանի մէջ Շահ Հիւսէյնը  
հաղորդում էր Պետրոսին, որ հա-  
մաձայն նրա ցանկութեան ողոր-  
մած ուշադրութեամբ և չարգան-  
քով լսել է Սուիին, և թէ քրիս-  
տոնեաց ազգերի միջից մի քանի  
տղէտներ արժանի են պատժի վատ  
գործերի կամ բռնած վատ ճանա-  
պարհի համար, այնուամենայնիւ  
Յարի բարեկամական նամակը  
հրաւիրում է իրան ընթանալ ո-  
ղորմութեանց շաւիղով և վեհանձ-  
նաբար ներում է այս ազգերի բո-  
լոր չանցանքներն ու մեղքելը,  
որպէս զի ապագայում նրանք  
այդպիսի սխալանքների մէջ չը  
ընկնեն: 1710 թ. Սուին դուրս ե-  
կաւ Պարսկաստանի սահմաննե-  
րից և Հիւլաբատից Աասպից ծո-  
վով ուղղւորուեց Հաշտարխանից

երկու առաջատանաւով: Ճանա-  
պարհին մեծ փոթորիկ բարձրա-  
ցաւ և նաւերից մէկը երկու ամ-  
սից լետոյ միայն կարողացաւ Հաշ-  
տարխանի նաւահանգիստը մըս-  
նել, իսկ միւսը, որի վրայ ինքը  
Սուին էր, քշեց Նիղաբատ (Նիղո-  
վայա): Սուիի հետ էր Պանձասարի  
Նսայի կաթողիկոսը երկու եպիս-  
կոպոսներով և 12 հալ՝ հմուտ մե-  
տաքսագործներ, որոնց նա տա-  
նում էր Մոսկուա, այնտեղ ռու-  
սաց թագաւորի համար մետաք-  
սեղէնի գործարան բանալու: Հաշ-  
տարխան հասած ապրանքից մի  
մասը իւրացրեց ուղեկիցներից մէ-  
կը, կապիտան Ախարսկը, մնացած-  
ները բարգոմիստրները «զաւթե-  
ցին, տարան, բացան և գնեցին»:  
Նահանգապետը «հրաման էր ա-  
րել, թէ էլ չեն ապրանքն ամէն  
առնուն, ոչ իւրն և ոչ իւր մար-  
դին իքմի չտան, իբր թէ թագա-  
ւորական է. Սուի մարդիք մնացել  
էին քաղցած ծարաւ»: 31 պարս-  
կական նժուգներ Սուին ցամաքով  
ուղարկել էր Հաշտարխան, սրան-  
ցից շորսը, որոնք գնուած էին  
թագաւորին նւիրելու համար և  
արժէին 4000 ռ., նահանգապետը  
իւր համար վերցրեց» և այլն: Սուին  
Հաշտարխան գալով քանի նեղու-  
թիւններ քաշեց, որպէս զի գըր-  
ուած ապրանքները և ձիերը աղա-  
տէ ու թոչլուութիւն ստանալ ա-  
ռանց մաքսի ներմուծելու: Մի-  
այն 1711 թ. սեպտեմբերին թա-  
գաւորական հրովարտակով հրա-  
մայուեց, որ Սուի ապրանքից մա-

քրւ չը վերցնեն, տան նրան ճա-  
 նապարհածախս մինչև Մոսկուա  
 և անարգել ուղարկեն, որովհետև  
 նա գնացած էր թագաւորի ան-  
 ճնական հրամանով: Բայց Օսին  
 չը կարողացաւ օգտւել այս կար-  
 գադրութիւնից, 1711 թ. օգոստո-  
 սին նա վախճանուեց և թաղուեց  
 Հաշտարխանի հայոց եկեղեցու  
 մօտ: Մինաս վարդապետի ասելով  
 նա թունաւորուած էր: Եսայի կա-  
 թողիկոսը այնուհետև վերադար-  
 ձաւ Գանձասուր, առանց թագա-  
 ւորին ներկայանալու: Վարա՛նա-  
 չի մեկիքների վրայ վատ աղղեց  
 Օսի մահը, մանաւանդ որ նրանք  
 առիթ ունէին այնուհետև աւելի  
 վախենալու պարսիկներից և տա-  
 ճիկներից: Օսի կարողութիւնից  
 և ապրանքից տեղական կառա-  
 վարութիւնը մի մասը տուեց զա-  
 նազան անձանց, իբր թէ այդ  
 նրանց սեփականութիւնն էր, միւս  
 մասից վճարեց վարձատրութիւն  
 նաւի ծառայողներին. մի քանի  
 իրեր փթել էին, գինիները փշա-  
 ցել էին: Մինաս վարդապետը  
 շատ աշխատեց, որ Օսի իրեղէն-  
 ներն ու ապրանքն լրիւ ուղար-  
 կուին իւր մօտ Մոսկուա. միայն  
 հետևեալ 1712 թ. վերջապէս նա  
 ստացաւ այդ իրեղէնները չը չա-  
 փշտակած մասը և Պետրոսին նու-  
 էր բերեց 26 պարսկական և ա-  
 րարական ձի, որոնցից երկուսը  
 արարական մատակներ էին, գոր-  
 դեր, մախմուր, մետաքսէ կտոր-  
 ներ, արծաթէ իւեր, ընձու կա-  
 չիներ, ասեղնադորձած սփռոցներ,

մէկ փութ սուրճ, 2 1/2 փութ ըն-  
 կուզ, չոր միրգ և այլն: Մնացածը  
 Մինաս վարդապետը ծախել տու-  
 եց և վճարեց Օսի պարտքերը,  
 որոնց ինքը երաշխաւոր էր կան-  
 գնել: Պէտք է ասել, որ Օսին բո-  
 լոր իւր ճանապարհորդութիւննե-  
 րը կատարում էր իւր ծախսով,  
 իւր հաշուով պատրաստեց ամբողջ  
 դեսպանութիւնը, մօտ չորս տարի  
 պահեց, կերակրեց և ռոճիկ վճա-  
 րեց իւր ուղեկիցներին. երբ Հաշ-  
 տարխանում նրա բոլոր ապրանք-  
 ները գրեցին, նա շարունակում  
 էր ինքր հոգալ իւր ձիերի պա-  
 շարը. և զեռ մտադիր էր իւր ծախ-  
 սով կազմել հայերից, թագաւորա-  
 կան ծառայութեան համար մի  
 ամբողջ գունդ՝ հազար կամ աւել-  
 ի մարդուց: Վարելի է զարմա-  
 նալ նրա անշահասիրութեան վը-  
 րայ: Օսին անկասկած Պետրոսի  
 նպատակների համար շատ չար-  
 մարաւոր անձնաւորութիւն էր, և  
 հազիւ թէ կարելի է ներքել, որ նա  
 քիչ չը նպաստեց Պետրոսի շուրջ-  
 կասպեան նահանգները Պարսկաս-  
 տանից խլելու մտադրութեան հա-  
 ստենանալուն: Նա լաւ էր ճանա-  
 չում Պարսկաստանը, նշանաւոր  
 կապեր ունէր հայկական իշխանա-  
 կան տները հետ, զարգացրել էր  
 իւր միտքը երկար ժամանակ Ֆը-  
 րանսիայում և Վերմանիայում ծա-  
 ռայելիւ և իւր նախազիծներով  
 ու անպաշտան այդ նախազիծնե-  
 րը իրագործելու պատրաստակա-  
 նութեամբ կարողացաւ Պետրոս  
 Մեծի ուշադրութիւնը պահել պարս-

կահաչոց գործերի վրայ աչնալիս մի ժամանակ, երբ ռուսաց տէրութեան բալոր ուժերը գրաւուած էին շվետական պատերազմով: Այս դժուար հանդամանքներում նա, առանց ռուսաց գանձարանի վրայ ծանրանալու, իւր սեփական պատասխանատուութեամբ ստանձնեց աչնալիս գործ, որալիսին է, սլարսից դեսպանութիւնը, նախապատրաստեց հայերին ռուսաց տիրապետութեան պաշտպան կանգնելու և երկրի մասին մանրամասըն տեղեկութիւններ չաչտնելով նոյնիսկ աշխարհագրական քարտեզ կազմելով՝ որոշ գաղափար տուեց ռուսաց կառավարութեանը աչն միջոցների մասին, որով կարելի էր տիրել Պարսկաստանի հայաբնակ գաւառներին: Հոգով մարմնով ենթարկուելով Պետրոս Մեծի հանձարեղ անձնաւորութեան հրապույրին, նա ոչ մի առիթ բաց չէր թողնում նրա ձեռնարկութիւններին նպաստելու, հաղորդում էր իւր խմացածը եւրոպական պետերի քաղաքականութեան մասին, Հաշտարխանից գրում էր սլարսից չարաբերութիւնների մասին շտեմների հետ, նրա թըղթակցութեան ըաղմաթիւ էջերը ցոյց են տալիս՝ որ նա պատրաստ էր ոչ միայն նորին մեծութեան ծառայութեան համար ամեն ինչ տնելու, այլ և իւր արիւնը թափելու և կեանքը զնելու նրա աջողութեան և կեանքի համար»:

Օսիի մահից չետոյ նրա գործի շարունակողն եղաւ Մի-

նաս վ. Տիգրանեանցը, որը ծնուել էր Խարբերդում: Սա թէ իւր մտաւոր ընդունակութիւններով, և թէ նախապատրաստութեամբ չէր կարող լիովին փոխարինել իւր ընկերոջը և նրա մահից չետոյ վախենում էր, չը լինի թէ ինքը մոռացութեան տրուի» Նա ժամանակ առ ժամանակ չաչտնում էր կառավարութեանը Պարսկաստանից ստացած տեղեկութիւնները, իսկ 1716 թ. թոյլտուութիւն ստացաւ վերադառնալու հայրենիք իբր թէ իսկապէս Օսիից մնացած իրեղէնները որոնելու, բայց իսկապէս աչն կողմերի հայերի հետ կապերը վերահաստատելու, նպատակով: Մինաս վարդապետը տեսնուեց էջմիածնի Աստուածատուր կաթողիկոսի հետ, որը խոստացաւ օգնել ռուսներին իւրաչիններով, երբ սրանք կը մըտնին Պարսկաստան, այցելեց Քանձասարի Ասալի կաթողիկոսին և սրանից ևս համանման խոստումը առաւ ու վերադարձաւ Մոսկուա: Մի փոքր չետոյ Քանձասարի կաթողիկոսը գրում էր Պետրոս Մեծին. «Ինչպէս Ձեր Մեծութիւնը բարեհաճել էք հրամայել և կը հրամայէք, աչնպէս կաշխատենք Ձեր ցանկութեան համաձայն և կարողութեան չափ, մեր ամբողջ ուժով, մտքով և սրտով, մեր խոստացածի պէս լրիւ պատրաստել ամեն պաշարեղէն, ինչ որ հարկաւոր կը լինի ձեր պետութեանը»:

Այդ միջոցին Պարսկաստանում խռովութիւններ սկսուեցին:

Աւղանները դուրս գալով Կան-  
 դահարից Միր Վէլիսը էմիրի առ-  
 աջնորդութեամբ, մօտենում էին  
 Սպահանին, գաւառներում խոռ-  
 ված թիւններ կային, լեզգիները լեռ-  
 ներից իջնում էին Կուրի հովիտը  
 և աւերում: 1721 թ. Գաուդ բէկ  
 լեզգի ցեղապետը և Ղազիկումիկ  
 ները յարձակուեցին Շամախու վը-  
 րալ, առան և աւերեցին քաղաքը,  
 ի միջի ալոց յարձակուեցին և  
 այնտեղի ոռոս վաճառականների  
 խանութների վրալ, առևտրական-  
 ներին ծեծեցին, իսկ ապրանքնե-  
 րը, մօտ 500 հազար ր. արժողու-  
 թեամբ, չափշտակեցին: Այս դէպ-  
 քերը առիթ եղան ոռոսների մի-  
 ջամտութեանը. հենց սլղ ժամա-  
 նակ վերջացաւ շվետական պա-  
 տերազմը Նիշտատի դաշնադրու-  
 թեամբ և Պետրոսը, գալով Հաշ-  
 տարխան, արշաւանքի ամբողջ  
 ձմեռը պատրաստութիւններ տե-  
 սաւ:

1722 թ. իուլիսի 19-ին ոռո-  
 սաց զօրքերը ցամաքով և ծովով  
 ճանապարհ ընկան դէպի Պարս-  
 կաստանի սահմանները: Օգոստո-  
 սի 23-ին Պետրոսը տիրեց Գեր-  
 բենտին, միսժամանակ և հարա-  
 շի վրաց Վախթանգ պարոնը  
 Նսալի կաթողիկոսի հետ 30 հա-  
 զար զօրքով դիմեցին լեզգիների  
 վրալ և լետ մղեցին սրանց:  
 Անհամբեր սպասում էին հալերը  
 ու վրացիք թագաւորի երևալուն:  
 Պետրոսը մտադիր էր առաջ գնալ  
 մինչև Շամախի և այնտեղ միա-  
 նալ Իրանց հետ, բայց պաշար

փոխադրող նաւերը բեկուեցին  
 Կասպից ծովում փոթորիկներից,  
 ձիերը խոտի պակասութիւնից  
 սկսեցին սատկիլ, և թագաւորը  
 պահապան զօրք թողնելով Գեր-  
 բենդում, վերադարձաւ Հաշտար-  
 խան: Վախթանգ պարոնն ու Ն-  
 սալի կաթողիկոսը վրացի և հայ  
 զօրքերով, մօտ երկու ամիս ի դուր  
 սպասելով ոռոսների դալուստին,  
 և խմանալով նրանց հեռանալու  
 լուրը, վերադարձան իրանց եր-  
 կիրները: Հալերը իրանց չօսը  
 կորցրին և ամրացան իրանց  
 հալերնիքի անմատչելի տեղերում:

Այս առիթով Վրաստանի  
 առաջնորդ Մինաս արքեպ- Փէր-  
 վաղեանը դրում էր Մինաս վար-  
 դապետին. «Նրկու ամիս զօրաժո-  
 դով արարինք և մնացինք ի Գան-  
 ձակ քաղաք, և լետոյ լուաք ըղ-  
 լուր թէ թագաւորն կտոյ չողան,  
 և ազգն լեզկոց ալ և ալ բանս  
 տարածեցին աշխարհքն ամենայն,  
 իրր թէ թագաւորն ի փախուստ  
 դառաւ, դոր քաւ մի լիցի: Աս-  
 տուած մի արասցէ, չորանայ  
 այնպիսի լեզուն, և մինք մնա-  
 ցինք շուարած, և գլուխ ի կոր  
 դառանք, և լալ աչօք իւրաքան-  
 չիւր ի բնակութիւնս գնացին, սըր-  
 տաբեկեալ և տարակուսեալ:» Այ-  
 նաւհետե կրկին Մինաս վարդապետի  
 միջոցով, որը Պետրոսի հետ էր, հա-  
 չերը պահպանում էին իրանց լա-  
 րաբերութիւնները ոռոսաց հետ,  
 Ղարաբաղի մեւիքները հաղորդում  
 էին, որ լեզգիները աւերում են  
 իրանց երկիրը և օգնութիւն էին

խնդրում: Ամբողջ Պարսկաստանը տակն ու վրայ էր եղել: Միր-Վէլիսի որդի Միր-Մահմադը նստել էր Սպահանում, գահընկեց անելով Հիւսէյին շահին, որի որդին փախել էր Թաւրիզ: Տաճիկները՝ իմանալով ռուսների երևալը Կասպից ծովի ափերին, իրանց զօրքերը սկսել էին առաջ քաշել: Տաճկահպատակներին արգելուած էր այցելել Էջմիածինը, ասելով թէ ձեր կաթողիկոսը միացել է ռուսների հետ. նա է կանչել նրանց, որպէս զի մեր դէմ առաջնորդէ» (Այդ միջոցին Բաջազէթի քիւրդ բէկը լսելով, իբր թէ ռուսները կաթողիկոսի օգնութեամբ գրաւել են Երեւանը, սուրհանդակ ուղարկեց Էջմիածին, խնդրելով որ նա միջամտէ և խանգարէ ռուսներին մտնել իւր երկիրը, և խոստանում էր իւր ամբողջ ժողովըրդով լուսաւորչական դառնալ: Կաթողիկոսը այս առաջարկութիւնը մերժեց): Տաճիկներն ու պարսիկները իրանց բարկութիւնը թափեցին հալերի վրայ: Աետրոս դի Սարգիս Վիլանէնց իւր օրագրի մէջ ասում է. «Հալերը հաւաքուել են գառների պէս, նրանց շորս կողմը բռնել են թշնամիք և դալլերի պէս կամենում են պատառոտել նրանց»: Ռուս բարձրագիր պաշտօնեաներից մէկը, Մակարովը զիմելով Մինաս վարդապետին բացականչում է. «Աստուած փրկէ և պահպանէ ինդճ քրիստոնեաներին բարբարոսների ձեռքից»: Այս պիսի չուսահատ վիճակի մէջ որոշ-

ւում է վերջապէս ուղարկել կայսերական հրովարտակ պարսկաբնակ հալերին, որի հալերէն թարգմանութեան մէջ ասուած էր. «Հաւատացէք և հաւատացնում ամ, որ մեք ոչ թէ միայն սովորադարութիւնն ջաթտանամ ձեզ, կառուվարում և այլ ձեր ամենայն ջաթտան կուղեմ ձեր խնդրուածքին կատարումն տամ և շատ բարութիւն հուքմ կառնեմ, ես այլ առաւել, շահական և շահաւէտ. որիչ կերպիւ զաւազաթ կու լինի. և մեծ ողորմութիւնն կառնիմք, և այլ շատ էս ջաթտան ձեր Հալոց Ասկին»: Այս հրովարտակը ուղարկուած էր Վսալի կաթողիկոսին և մելիքներին Յովհաննէս կարապետի ձեռքով, որին չանձնարարուած էր ամեն կերպ բերանացի քաջալերել հալերին, որպէսզի մինչև ռուսների գալը մի կերպ զիմանան թշնամիների չարձակումներին: Մէկ ամսից լետոյ ռուսաց զօրքերը Մատիւլկինի հրամանատարութեամբ վերցրին՝ ագուն. ռուսների ձեռքն անցան նաև Վիլանն ու Մազանդարանը: Իսկ սեպտեմբերին Թահմազ շահը գաշն կապեց Աետրոս և Եծի հետ, որով շուրջ Կասպեան գաւառները զիջանում էր Ռուսաստանին, որովհետև ռուսները դրա փոխարէն խոստանում էին օգնել նրան և մաքրել նրա երկիրը թըշնամիներից ու մշտապէս հաստատել պարսկական տիրապետութիւնը: Այս բոլորը սիրտ տուեց Վարարազի մելիքներին, սրունք պա-

տասխանելով Պետրոսի հրովարտակին, գրում էին. «Թէպէտ շորից կողմանց թշնամիք զօրեղք չարուցեալք կան ի վերայ մեր, ապա... զմեզ և զմեր մերձակայքս ողջութեամբ պահեալ եմք, թէպէտ կռուելով և թէ ալլովք հնարիւք և ակն ունիմք զի մինչև ի տէրութիւն քոյ առ մեզ հասանիլն կարողացաք պահել զմեզ ի թըշնամեաց մերոց»... Յորժամ մեր ձեացի զօրքն թագաւորական ի սահմանս մեր, չաչնժամ և մեք ելցուք ըստ շախու կարողութեան մերում զօրօք ընդ առաջ զօրաց հզօրից և զոր ինչ հրամայեալն իցէ ի քումմէ տէրութենէդ, կատարեսցուք»... Տ օր տօնեցին հալերը հրովարտակի ընթերցման հանդէսը

Իմանալով Գերմանիոյ Պետրոսի հեռանալու լուրը, տաճիկները շտապեցին գրաւել հարեան Հայաստանի և Արաստանի նահանգները և իրենց հովանաւորութեան ներքոյ առնել Շամախուն տիրող Գաուտ-բէկին: Պետրոսի և Թահմազի դաշնը նրանց շիթեցրեց. քիչ էր մնում նրանց մէջ պատերազմ գրգռուէր: Արշապէս բանակցութիւններ ի միջոցով Պետրոսը 1724 թ. դաշն կապեց Վ. Գաան հետ. Արաքսի և Աուրի գետախառնուրդը ընդունուեց սահման Ռուսաստանի, Պարսկաստանի և Տաճկաստանի մէջ, Ռուսաստանը պարտաւորում էր զիջանել տալ պարսիկներին լօգուտ տաճիկների նրանց գրաւած երկիրները: Բայց այս խոստումը Ռու-

սաստանը չէր կարող իրադործել և տաճիկները շարունակեցին աւելի ու աւելի խորը մտնել պարսից աշխարհը: Այդ միջոցներումն է, որ Գաւիթ-բէկը մի խումբ քաջերով իւր իշխանութիւնը հաստատել էր Հալիձորում և պաշտպանում էր թէ պարսիկ խաներից և թէ չեսոյ տաճիկ զօրավարներից:

Պետրոսը չթողեց քրիստոնեաներին օգնելու մտադրութիւնը: Նա շարունակում էր ուշի ուշով հետեւել հայաբնակ և վիրաբնակ երկիրների վիճակին, անընդհատ չարաբերութիւններ էր պահպանում նրանց հետ և քաջալերում էր: Բայց օգնութիւնը ուշանում էր, և Նսալի կաթողիկոսը ու մելիքները Անտօն քահանային և Չալապի քեօխուլային ուղարկեցին Ռուսաստան իրանց ցանկութիւնները հաղորդելու: Այս սուրհանդակները չաչանեցին, որ Աւան և Միրզա իւզբաշիների հրամանատարութեամբ մելիքները հաւաքել են 40 հազար զօրք և պաշտպանում են պարսիկներից և տաճիկներից. թէև Թահմազ շահը և Գանձակի Իբրահիմ փաշան մեծ խոստումներ են անում, բայց հալ իշխաններն ու կաթողիկոսը չեն հաւատում նրանց: Արարատեան կաթողիկոսն էլ ծածուկ մելիքներին կողմն է պահում: Այժմ թագաւորը չի ուղարկի իւր զօրքերը, այն ժամանակ կաթողիկոսն ու մելիքները խնդրում են, որ իւր հովանաւորութեան տակ ընդունէ ի-

քանց ու հրամայէ տեղ տալ իրանց նոր նուաճած երկրներում: Պետրոսը հիւանդ էր, երբ եկան այս պատգամաւորները: Թօսելով նրանց հետ միջանկի ժամ, նա պատրաստել տուեց մի հրովարտակ, որով թուլ էր տրուում հաչերին գաղթել Գիլան, Մազանդարակ, Քաղու կամ Գերբենդ, որովհետեւ, տաճիկները հետ կապուած դաշնադրութեան համաձայն, չէր կարող զօրքով օգնել հաչերին: Գլորուեց նոյնպէս և շուրջկասպեան գաւառները կառավարութիւններին, որ թուլ տան հաչերին գաղթել, իսկ եթէ տաճիկներն ասեն, որ այդ դաշնադրութեան հակառակ է, պատասխանեն. «մենք չենք նրանց կանչել, այլ նրանք իրանք են խնդրել մեզ մեր հովանաւորութեան տակ առնել իրանց և մենք չենք կարող լանուն քրիստոնեաների այդ բանի մէջ մերթել հաչերին, իբրև քրիստոնեաներին»:

Բայց այս թուլաութիւնից մեղիքները չկարողացան օգտուել, Պետրոսի մաշից լետու նրանք զբրում էին որ չեն կարող կատարել թագաւորի կամքը և գաղթել, որովհետեւ պատասխարուել են ամուր տեղերը, ուր արդէն երեք տարի է՝ պաշտպանուում են, և եթէ իջնեն հովիտները, տաճիկները իրանց վրայ կը չարձակուեն և գերի կառնեն, մանաւանդ դժուար պիտի լինի Աուր գետն անցնելը: Նրանք աւելացնում էին որ ջարդել են տաճիկական վեց-հազարանոց գունդը, փաշային գերի են վեր-

ցրել, որ տաճիկները հրաման են ստացել ոչնչացնելու բոլոր հաչերին, և աղաչում պաղատում էին օգնութիւն ուղարկել գոնէ Բագուց: Նախորդ անգամ իրենք ոչ թէ գաղթելու թուլաութիւն էին խնդրել, այլ նոյնպէս օգնութիւն: Այս նամակի տանողը կրկին քեօփուլայ Չալապին էր: Ակատերինա Առաջին խոստացաւ օգնել ամեն կերպ հաչերին, նոյն իսկ կարգադրեց, որ զօրքերը շուրջկասպեան գաւառներից աւելի խորը քաշուին Պարսից աշխարհը, բայց այս հրամանը սխալ հասկացուեց և չիրագործուեց: Թուոաց կառավարութիւնը շարունակոււ էր չուսադրել, որ երբ չարմար ժամանակը կը գալ, չի չապաղիլ նրանց պաշտպանութիւն ցուց տալ, իսկ առայժմ թող հաստատ մնան տաճիկների չարձակումների դէմ, սուրհանդակներին և հաչոց զօրքի հրամանատարներին դրամական օժանդակութիւն էր տալիս, մուշտակներ, նոյն իսկ աստիճաններ, բայց գործով ոչ մի իրական օգնութիւն չէր հասցնում: Այսպէս տեեց մինչև 1732 և 1735 թթ., երբ Թուոաստանը վերադարձրեց շուրջկասպեան գաւառները Պարսկաստանին, հրաժարուելով Պետրոս Մեծի ընդարձակ ծրագրից: Վարարադում հաստատուեց Նադր շահի իշխանութիւնը:

Ակտեղ վերջանում են պ. Աղեանի հրատարակած վաւերագրերի մէջ շօշափուած քաղաքական դէպքերը: արհուհետեւ հալկական դա-

ար կրկին ասպարէզ է դուրս գալիս միայն Ակատերինա Բ. -ի օրով. ինչ նպատակներ էին ոգևորում Պետրոս Մեծին այս ձեռնարկութիւններն մէջ. Նախ և առաջ նա կամենում էր պարսկական մետաքսի ամբողջ առևտուրը ձգել Ռուսաստանի ձեռքը. այս ապրանքը պետութեան մենապաճառութիւն էր, դանձարանը գնում էր ամբողջ մետաքսը և այնուհետ ինքը վաճառում Աւրուսա. Պետրոսը, իւր նախորդների պէս, աշխատում էր որ Պարսկաստանում արտադրուած ամբողջ մետաքսը Ռուսաստանով անցնէ և այս պատճառով ամենայն կերպ հովանաւորում էր հաշերին, որոնց միջոցով էր կատարում այդ առևտուրը: Նա աշխատեց և մետաքսէ գործարան հիմնել տալ իւր պետութեան մէջ և այս բանում նրան աջակցեցին օրինակ, հաշերը, Շերվանեանը, որը Ղզլարի մօտ բացեց իւր գործարանը: Միւս կողմից, Պետրոսը, հաշկական գործերի մէջ խառնուելիս ղեկավարում էր բուն մարդասիրական և կրօնական զգացմունքներով: Նա շատ անգամ գրում էր «Մենք այդ հաշկական աղղը, քրիստոնէութեան պատճառով, մեր առանձին շնորհքի և հովանաւորութեան: ... էնք ընդունել», և մինչև իւր վախճանը չէր թողնում հաշերին օգնելու միտքը: Արք նա գրաւեց շուրջկասպեան յահանգները, նա հրամայում էր Մատիւշկինին և ուրիշ զօրավարներին թուլացնել այդ մահմեդական տար-

րը և վախարկել նրան քրիստոնէականով, ամեն կերպ աշխատելով մանաւանդ հաշերին գաղթեցնել այդ կողմերը: Առհասարակ նկատելի էր, որ պետական շահերը ոչ երկրորդական տեղ էին բռնում Պետրոսի արարելութեանց մէջ հաշերի հետ:

Մնում է մի քանի խօսք ասել Մինաս վարդապետի վերջին տարիների գործունէութեան մասին: Յուրի մահից վետոյ նա շարունակում էր տեղեկութիւններ հաղորդել ռուսաց կառավարութեանը պարսկահաշկական գործերի մասին և նորի իսկ դեպք շաշատան կաթողիկոսների ու մելիքների հետ տեսնուելու և պալմանաւորուելու:

Գանձասարի Ասալի կաթողիկոսը նրան արքեպիսկոպոսական աստիճան տուեց և հովիւ հրատարակեց Ռուսաստանում բնակուող հաշերի վրայ: Մինաս վարդապետը աշխատեց առաջնորդարաններ հիմնել հաշարնակ քաղաքներում, թողտուութիւն տանալ հայոց եկեղեցիներ հիմնելու Պետերբուրգում ու Մոսկուայում և արուարձաններ հաշկական գաղթականների համար: Գերբենդի արշաւանքի ժամանակ նա ուղեկցում էր Պետրոսին և չետոյ շաշատարխանում մնալով չէր գաղարում միջնորդ լինելուց ռուսների և Ղարաբաղի մէջիքների շարաքերութեանց մէջ: Պետրոս Մեծի մահից վետոյ նա գրադուած էր զլխաւորապէս իւր պրուած հօտի հողերը գործերի կարգադրութեամբ և ապրում էր գրեթէ միշտ շաշ-

տարիանում, ուր հայերի թիւը համեմատաբար շատ էր: Բայց 1736 թ. նրա դրութիւնը այնպէս վատ էր որ նա գրում էր թէ ետին ծաւր աղքատութեան և չքաւորութեան է հասել և որովհետև իւր միջոցով հայերին խոստացած օգնութիւնը չարուեց, ամենքից թողնուած է և իւր ծերութեան օրերում մեծ ամօթի մէջ է, իւր հօտը իրան չէ հնազանդուում, նույն իսկ մի քանիսը նենդութեամբ աշխատում են իրեն բռնել և չանձնել թշնամուն, և խնդրում էր որ կալսերական հրովարտակով հաստատուի ուսուսահայոց առաջնորդ: 1740 թ. նա կրկին մի չալտարարութիւն տրուեց, որով խնդրում էր տարիներ ընթացքում իւր մօտ հաւաքուած գաղտնի թղթերը վերցնել արտաքին գործերի ատեանը, որպէսզի օտարի ձեռքը չընկնեն: Այս թղթերը նրանից ընդունուեցին: Այնուհետև միևնույն թուականին նա խնդրամատուց եղաւ, որ իրան ընդունեն լոյն-ուսական դաւանութեան եկեղեցու գիրկն ու նշանակեն արքեպիսկոպոս Ռուսաստանում բնակուող հայերի վրայ, համաձայն կաթողիկոսի կոնդակի: Այս գրութիւնը ընթացք չստացաւ—երևի, շուտով սրանից լիտու Մինաս վարդապետը վախճանուեց:

Պ. Եղեանի լոյս ընծայած դո-

կումենտներ ընթերցողը, եթէ միայն նա ճշմարտասիրութեան զգացմունքով է ղեկավարում, պարզ կը տեսնի, որչափ հեռու են արդարութիւնից այն չարձակումները, որ ուսու մամուլի մէջ վերջին տարիներս լինում են հայերի դէմ: Այդ մամուլի մէջ նկատուած է նաև մի անհամակրելի ձգտում— աչն է՝ երկպառակրութիւն ձգել հայերի ու վրացիների մէջ, պախարակելով առաջիններին և գովաբանելով միւսներին: Մենք չենք կարող ծածկել, որ պ. Եղեանը առաջաբանի մէջ կարծես ի նկատի ունի պատասխանել և այս առարկութիւններին, նա հակակառնին զուգրնթացաբար կանգ է առնում նաև ուսու վիրական չարաբերութիւնների վրայ, որոցէ հէնց այս բանակուական ուղղութեան պատճառով է, որ այս չարաբերութիւնների պատկերը բաւականին մռայլ է դուրս եկել: Ինչևիցէ, կարելի է համաձայնուել կամ համաձայնուել պ. Եղեանի լուսաբանութեան հետ, բայց չէ կարելի հերքել, որ XVIII դարի սկզբների ուսահայկական և ուսավիրական չարաբերութիւնների ուսումնասիրութիւնը, շնորհիւ այս գրքի մէջ հրատարակած վաւերաթղթերի, նոր հիմքի վրայ է դրուած:

Ստ. Լիսիցեանց.

